379 Ես երբեք չեմ եղել իմ տան մեջ,

1. Ես երբեք չեմ եղել իմ տան մեջ,
Ես երբեք չեմ տեսել իմ աչքով,
Բայց հաճախ կարոտով եմ տենչում,
Եվ հոգիս դեպի տուն, դեպ երկինք է թռչում:

Երուսաղեմ արդարության,
Երուսաղեմ խաղաղության,
Երուսաղեմ ուրախության,
Երուսաղեմ...

2. Ես երբեք չեմ եղել իմ քաղաքում,
Չեմ տեսել ճաճանչներն անգին քարերի,
Բայց հաճախ թախիծով է սիրտս պատվում,
Եվ հոգիս կարոտած միշտ այնտեղ է ձգտում:

3. Երբ պանդուխտ այս կյանքիս կգա վերջ,
Ես այնժամ կլինեմ իմ տան մեջ,
Կշրջեմ լուսեղեն, ոսկե քաղաքում,
Ուր Գառան հետ հավերժ սուրբ կույսերն են շրջում: